«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ *Գոյականական անդամի լրացումները Հ. Սահյանի երկերում*

ԱՌԱՐԿԱ *Հայոց լեզու և գրականություն*

ՀԵՂԻՆԱԿ *Գայանե Ղարիբյան*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ *Լճաշենի Ա. Տեր –Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց*

ՂԵԿԱՎԱՐ՝ *Արմինե Ղազարյան*

Բովանդակություն

Ներածություն 3
Նախադասության երկրորդական անդամներ.....4
Գոյականի/Գոյականական անդամի/ լրացումներ.....5
Որոշիչ.....5
Որոշչի և որոշյալի կապակցությունը.-.....10
Որոշչի և որոշյալի շարադասությունը 12
Հատկացուցիչ.....12
Հատկացուցիչ և հարկացյալ կապակցությունը 15
Հատկացուցիչ և հատկացյալի շարադասությունը.....15
Բացահայտիչ 16
Բուն կամ սովորական բացահայտիչ 16
Մասնական բացահայտիչ.....17
Մասնավորող պարագայական բացահայտիչ.....18
Եզրակացություն.....20
Օգտագործված գրականություն.....21

Ներածություն

Գիտական և տեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ արդի կրթական համակարգում մշակվում և կիառվում են ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ ու եղանակներ:

Հատկապես համացանցի և նոր տեխնոլոգիաների օգտագործումը լայն հնարավորություններ է տալիս նյութի որոնման հաղորդման, նորովի մատուցման և յուրացման համար :Ինչպես գիտեք, ուսուցման ճիշտ մեթոդներից է կախված դասի արդյունավետությունը, ուստի նյութի մատուցման կարևորագույն նպատակը պետք է լինի գիտելիքների, հմտությունների, կարողությունների, լեզվական մտածողության, ինչպես նաև մտավոր ունակությունների, ճանաչողական հետաքրքրությունների զարյացումը, ոչ թե միայն տեղեկատվության հաղորդումը:

Ուսուցման գործընթացում պետք է սովորողների մոտ ձևավորել նաև տրամաբանելու և ստեղծագործելու ունակությունը:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ «Գոյականական անդամի լրացումները Հ. Սահյանի երկերում»:

Թեման կարևորվում է նրանով, որ շատ հաճախ սովորողները հանդիպում են լեզվական միավորների, լեզվական կանոնների, լեզվական սխալների , ինչպիսիք են՝ նախադասության անդամների անհամաձայնություն, նախադասության անդամների սխալ շարադասություն, տրոհվող անդամների ոչ ճիշտ կետադրություն և այլն:

Աշխատանքի նպատակը ոչ միայն քերականական գիտելիքները մատչելի և դյուրընկալ դարձնելն ու հաղորդելն է, այլև սովորողների մոտ զարգացնել հաղորդակցական հմտություններ, ձեռք բերել գիտելիքներ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարադասության վերաբերյալ, դրանք կիրառել գործնականում, խոսքում ճիշտ գործածել, իմանալ տրոհվող անդամների կետադրությունը:

Սովորողը պետք է կարողանա ինքնուրույն գտնել որոշիչները, հարցերի միջոցով խոսքի մեջ տարբերել դրանք:

Պետք է զարգացնել բանավոր և գրագետ խոսքը: Կարողանա նախադասությունը վերլուծել շարահյուսորեն:

Գոյականական անդամի լրացումների մասին գիտելիքները ամրապնդել:

Նախադասության երկրորդական անդամներ

Շարահյուսության հիմնական առարկան նախադասության ուսումնասիրությունն է, ինչպես նաև բառերի շարահյուսական կապակցությունների և նրանց իրացման միջոցների ու եղանակների ուսումնասիրությունն է:

Լեզվի շարահյուսական կառուցվածքը կարող է քննվել ու բացահայտվել միայն լեզվի հաղորդակցական միավորների, այսինքն՝ նախադասությունների կառուցվածքի քննությամբ և բացահայտմամբ, որի խնդիրներից մեկն է պարզել, թե նախադասության անդամները իրար հետ ինչ հարաբերությունների մեջ են գտնվում:

Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով:

Շարահյուսական մակարդակում նախադասության անդամները բաժանվում են 2 խմբի՝ գլխավոր և երկրորդական:

Ենթական և ստորոգյալը նախադասության միջուկն են կազմում և կոչվում են գլխավոր անդամներ :[1] Ենթակայից ու ստորոգյալից բացի, նախադասության կազմի մեջ մտնող մյուս անդամները կոչվում են երկրորդական անդամներ [2]:Դրանք որպես կանոն լրացնում են կամ գոյականներին՝ անկախ նրանից, թե գոյականները նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս կամ բայերին՝ կրկին անկախ նրանից, թե բայերը նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս : Այստեղից էլ տարբերակվում են նախադասության երկրորդական անդամների երկու խումբ՝ գոյականի կամ գոյականական անդամի լրացումներ, որոնք են որոշիչը հատկացուցիչն ու բացահայտիչը և բայի կամ բայական անդամի լրացումներ, որոնք են խնդիրներն ու պարագաները:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս լրացումները որոշ իմաստով պայմանական են, թեկուզ և նկատի ունենալ այն, որ որոշիչը հատկացուցիչ ու բացահայտիչ կարող են ունենալ ոչ միայն գոյականները, այլև գոյականաբար գործածված բառերով արտահայտված նախադասության անդամները, իսկ խնդիրներ ու պարագաներ

---

[1] Մ. Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու Ե. 1987 էջ 191

[2] Մ. Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու Ե. 1987 էջ 191

կարող են ունենալ ոչ միայն բայերը, այլև որոշ ածականներ և բայանուն գոյականներ: Ուրեմն՝ գոյականի/ գոյականական անդամի/ լրացումները և բայի/ բայական անդամի/լրացումներ անվանումները բացարձակ իմաստով չպետք է հասկանալ: Այս անվանումները նշում են միայն երկրորդական անդամների հիմնական և զանգվածային կիրառությունները:

Մյուս կողմից՝պետք է նշել, որ ժամանակակից քերականություններում ընդունված՝ նախադասության երկրորդական անդամների դասակարգումն ու ստորաբաժանում ը չի հիմնվում քերականական-ձևային հստակ չափանիշների վրա: Ահա թե ինչու քերականական արտահայտության ձևի տեսակետից լիովին նույն բառաձևերը հաճախ նախադասության տարբեր անդամներ են համարվում, օրինակ՝սարի ծաղիկ-որոշիչ, սարի գագաթ – հատկացուցիչ, մատիտով գրեց-խնդիր , հաճույքով գրեց-պարագա: Ինչպես այս օրինակներից կարելի է եզրակացնել, ժամանակակից քերականություններում նախադասության երկրորդական անդամները դասակարգվում և հաճախ որոշվում են ոչ թե ըստ իրենց արտահայտության քերականական ձևերի, այլ ըստ բառերի տրամաբանական իմացաբանական հարաբերությունների բնույթի:

Գոյականի/Գոյականական անդամի/ լրացումներ

Գոյականի կամ նախադասության գոյականական անդամի լրացումներն են որոշիչը հատկացուցիչը:

Որոշիչ

Որոշիչը ցույց է տալիս գոյականի / նախադասության՝գոյականով արտահայտված որևէ անդամի/ հատկանիշը, այն է՝որակը, որպիսությունը, չափը քանակը և այլն:[3]

Իրենց արտահայտած իմաստին համահնչուն ու համապատասխան՝ որոշչի պաշտոնով ամենից պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը, այն է՝ ածականը, թվականը, դրանց հարաբերակից դերանունները, մասամբ էլ մակբայը, հարակատար, ենթակայական և ապառնի 2-րդ դերբայները և ապա գոյականի տարբեր հոլովական ձևերը, որոնք տվյալ դեպքում արտահայտում են հատկանշային նշանակություն:

[3] Մ. Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու Ե.1987թ էջ 193

Այս խոսքի մասերի և նրանց տարբեր խմբերի իմաստային առանձնահատկություններից կախված՝որոշիչները նշանակության տեսակետից խիստ բազմազան են: Դրան միանում է նաև որոշչի և որոշյալի շարահյուսական կապակցության եղանակի տարբերությունը հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերի և գոյականների դեպքում. առաջինները որոշյալների հետ կապակցվում են ուղիղ ձևով, առանց փոփոխության, այսինքն՝ առդրությամբ, իսկ երկրորդները՝ հոլովական ձևերով, այսինքն՝խնդրառությամբ:

Գոյականական անդամների լրացումների կիրառությունները Հ. Սահյանի բանաստեղծությունների ժողովածուներում :

Սահյանական պոեզիայի առանձնահատուկ հմայքը պայմանավորված է նրանով, որ ունի յուրահատուկ գրավչություն, որի գաղտնիքը թաքնված է ոչ միայն զգացմունքների անկեղծության, այլև բանաստեղծական ձևի ինքնատիպության գրելաոճի պարզության ու հստակության մեջ:[4]

Սահյանի պոեզիան առավել հատկանշական է այն առումով, որ բացի փոխաբերությունից, բանաստեղծը օգտագործել է պատկերավորման այլ միջոցներ՝ համեմատություն, մակդիր, չափազանցության և այլն , որոնք էլ ավելի են հարստացնում և գունագեղ դարձնում խոսքը:Պետք է նշել, որ Սահյանի պոեզիայում գործածված որոշիչները գրեթե մակդիրներ են, որոնք խոսքը դարձնում են ավելի ճոխ ու հարուստ, ավելի պատկերավոր ու տպավորիչ:

Հայտնի է, որ բոլոր մակդիրները որոշիչներ են, բայց ոչ բոլոր որոշիչներն են մակդիր: Մակդիրը պատկերավորման միջոց է, գեղարվեստական որոշիչն է, որը առարկային վերագրում է փոխաբերական հատկանիշ:

Որոշչի արտահայտությունը

Ածականով արտահայտող որոշիչ –Որոշիչն արտահայտվում է և՛ որակական, և՛ հարաբերական ածականներով:

ա/ Որակական ածականներով *արտահայտված որոշիչները ցույց են տալիս առարկաների որակական հատկանիշները անմիջականորեն, ուղղակի*

[4] Ա.Ջրբաշյան Գրականագիտություն Հ. Սահյանի բանաստեղծական, վարպետության մի քանի հարցեր 2021 էջ 19

կերպով:Որպես որոշիչ կարող են հանդես գալ որակական ածականների ինչպես դրական, այնպես էլ բաղադատական և գերադրական աստիճանների ձևերը. ինչպես՝

*Այս **պարզ ու պրտտոր** գետերն աշխարհի*

Ասքերն են անգիր հավիտենության:[5]

*Կանգնել եմ **ամուր** քարափի վրա*

Կարծես թե նրա զուգաձորդն եմ ես:

Ամպրոպից հետո

*Երկինքն **ավելի** կապույտ է լինում,*

*Խորերն **ավելի** կանաչ են լինում*

Ամպրոպից հետո:

Ամպրոպից հետո

*Ճերմակ շուշանը **ավելի ճերմակ***

*Կակաչն **ավելի** կարմիր է լինում,*

*Եվ մեղրածաղիկն՝ **ավելի դեղին:***

Տեսել եմ արդեն հավիտենության[6]

***Ամենավերջին ակնթարթը** ես,*

Ամենավերջին հավիտենության

***Ամենավերջին ժամի** ժամանակ*

***Ամենավերջին սահմանի** վրա:*

*բ/**Հարաբերական ածականներով** արտահայտված որոշիչները առարկաների հատկանիշները ցույց են տալիս ոչ թե ուղղակի կերպով, այլ ուրիշ առարկաների միջնորդությամբ, ինչպես՝*

Նաիրյան դալար բարդի

*Նազում ես ու շորորում **զմրուխտե** քո շորերում…*

*Լուսնյակ գիշեր է **կապույտ** կտոր է*

***Կապույտ** սափոր է, **կապույտ** գավաթ:*

***Թվականով արտահայտված որոշիչ-** Որոշիչն արտահայտվում է թվականի բոլոր տեսակներով:*

---

[5] Հ. Սահյան բանաստեղծություններ . երկեր հատոր 2-րդ Սեզամ բացիր Ե. 1984 էջ 100

[6] Հ. Սահյան, բանաստեղծություններ, հատոր առաջին, Տար ինձ ժամանակ Ե. 1984 էջ 196

ա/ Քանակական կամ բացարձակ թվականներով.

*Եվ մինչև անգամ **հազար** սարի ետև*

***Հազար** կապով կապված խաչով խաչված լինեմ…*

*Մայրս սեղան կբանա **յոթ** օր, **յոթ** գիշեր,*

Այգեպանը ինձ կօրհնի, հովիվն ինձ կօրհնի,

*Հայրս հյուրեր կկանչի **յոթ** օր, **յոթ** գիշեր…*

բ/ Դասական թվականներով.

*Իմ **առաջին** սիրո առասպելը մնաց*

Առուների կապույտ շրթունքների վրա:

***Առաջին** սերս ձնծաղիկի պես*

Ձնհալի միջից մի անգամ ժպտաց:

***Դերանվամբ արտահայտված որոշիչ**- Դերանուններից որոշչի պաշտոնով հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող դերանունները:*

ա/ Ցուցական դերանուններով

*Մաշված **այն** կածանի բարակ թելը մնաց*

Քարափների կողին ու ծնկների վրա:

*Հայաստան հյուսող քո **այդ** ձեռքերը…*

*Խառնվել **այն** հողին որ իրեն սնել է…*

*Հայն **այսպիսի** հայրենիք*

Երբ է տեսել աշխարհում,

Ե՞րբ է եղել աշխարհում

*Մի **այսպիսի** Հայաստան:*

Շնորհակալ եմ քեզանից իմ սի՛րտ,

*Որ դիմացել ես **այսքան** ցավերի…*

*Աշխարհում **այնքան** սահմաններ կան դեռ…*

*Սահմաններ կան դեռ –**նույն** խոփով հերկված…*

բ/Որոշյալ դերանուններով.

*Որ նրա **ամեն** շշուկը բռնես*

*Որ նրա **ամեն** խորհուրդն ըմբռնես…*

Հավքը հավքի բերանից խոսք էր խլում

Ողջ անտառն էր մի հավք դառած ծլվլում…

Ես ամբողջ գիշեր քեզ էի կանչում,

Քեզ էի հիշում ես ամբողջ գիշեր…

Գ/ Անորոշ դերանուններով.

Ուրիշ ամպեր են նստել սարերին,

Ուրիշ մամուռ է ծաղկել քարերին,

Ուրիշ աչքեր են նայում արևին:

Վեր թռա ինչ-որ կանչից

Տառապած բարձիս վրա…

Բայց կա ինչ-որ քնքուշություն

Քո անողոք դեմքի վրա:

դ/ Հարցականներով.

Որքան ամպ ու բուք են տեսել այս սարերը

Որքան սև ու սուգ են տեսել այս սարերը

Որքան լույս ու մութ են տեսել այս սարերը:

Դերբայներով արտահայտված որոշիչ-Հայերենի հարակատար, ենթակայական ու ապակատար դերբայները հանդես են գալիս որոշչի շարահյուսական պաշտոնով:

Մի օր զարթնած անտառ

Մի օր հնձած հովիտ…

Թեքված մի մատուռ եմ հիշում

Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր

Բերանին մամռոտած մի խուփ…

Որոշիչ պաշտոնով հանդես է գալիս նաև անորոշ դերբայը, բայց հոլովված ձևով՝ սեռական տրական հոլովաձևով:

Տանջող տենչանք լալու Շնչելն ապրելու միակ վկան էր…

Եվ սիրելու սարսուռ…

Գոյականով արտահայտված որոշիչ. *Որոշչի պաշտոնով հանդես են գալիս նաև գոյականները՝ ըստ որում ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական հոլովներով:*

ա/ Որակական իմաստով

*Երբ նուրդ մատները **մանուկ** լույսի*

Քանդում են մութի ծամիկները…

Այն քնքշաթև աղավնին, հրաշք աղավնին՝

*Աչքին **գոհար** արտասուք, պահում է ճամփաս…*[7]

բ/ Չափ ու քանակի իմաստով[8]

*Մամուռի տակ **մի բուռ***

Պատմության մասունք :

***Մի բուռ** աշուն բերեք, **մի բուռ** աշխարհ…*

Սեռական տրական հոլովը

*Անտառում **ամպի** ծվեններ կային…*

***Լեռան** ոտքի տակ կիրճ է վիհավոր,*

***Լեռան** բարձունքը՝ ճերմակ ձրավոր…*

Բացառական հոլովը.

Ամեն բանում նա վարպետ է, հմուտ է

*Կարող է զարդ շինել **քարից:***

Գործիական հոլովը

***Սարերով** լիքը երկինք,*

***Երկինքով** լիքը ձորեր…*

Կապային կառույցները.

*Քո **սարերի պես**, քո կանաչ-կարմիր*

Մայրամուտներն եմ հագնելու նորից…

Որոշչի և որոշյալի կապակցությունը.-

Ժամանակակից հայերենում որոշիչը որոշյալի /կամ ածականը գոյականի/ վրա դրվում է իր ուղիղ անփոփոխ ձևով՝ չհամաձայներով նրա հետ ոչ հոլովով և ոչ՝ էլ թվով[9]*: Սակայն կան առանձին որոշիչներ, որոնք իրենց բառիմաստային առանձնահատկություններով պայմանավորված հոգնակի որոշյալ են պահանջում:*

---

[7] Հ. Սահյան բանաստեղծություններ հատոր առաջին Ե. 1984 Որոտանի եզերքին, էջ 15

[8] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն Ե. 1965 էջ 426

[9] Մ. Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու Ե. 1987 էջ 200

Դրանք են.

ա/ Ածականներից և գոյականներից կազմված կրկնավոր ածականները, որոնք ընդհանրապես ունեն բազմապատկության իմաստ:

Մորս ծաղիկ ծոցի մեջ

*Կար մի **ծիվ-ծիվ** Հայաստան:*

Ամեն ծալքում մեր ծխի

*Կար մի **ծիլ-ծիլ** Հայաստան:*

Չորս կողմը սարեր են ծալ-ծալ,

Եվ ծալ-ծալ ձորեր են այստեղ.

***Թելիկ-Մելիկ** առու*

***Ուլունք- ուլունք** մասուր*

բ/Բազմակիություն և բազմազանություն արտահայտող ածականները, ինչպես՝

Լեզուն ես դնում բերանում նրա,

*Ասել ես տալիս խոսքեր **զանազան…***

Գ/բազմակի որոշիչները եթե վերաբերում են տարբեր որոշյալների:

Ո՞ր մնացին տարիներս

Կանաչ-կարմիր,

***Սև-սպիտակ** տարիներս…*

դ/Մի/մեկ/ քանակական թվականի հետ գոյականը միշտ եզակի է դրվում:

***Մի** խոսք ասեմ քո անունից*

***Մի** լուր տանեմ գալիքներին*

***Մի** լույս բերեք հոգնած ու հեգ…*

Մեկից բարձր թվականների հետ գոյականը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի : Այս զուգահեռ ձևերի իմաստային տարբերությունն այն է, որ եզակի ձևերում շեշտը դրվում է անձերի կամ իրերի միասնության վրա, իսկ հոգնակի ձևերում՝ նրանց առանձնության վրա : Որպես/կանոն/ ընդհանուր օրինաչափություն՝ մեկից բարձր թվականների հետ գոյական որոշյալը, երբ անորոշ է, սովորաբար եզակի է դրվում, իսկ երբ որոշյալ է սովորաբար հոգնակի է դրվում:

Որոշչի և որոշյալի շարադասությունը .

Ժամանակակից հայերենում որոշիչն ունի թե՝ սովորական և թե՝ շրջուն շարադասություն: Սովորական շարադասությամբ որոշիչը դրվում է որոշյալից առաջ՝ նախադաս:

Իսկ գեղարվեստական գրականության մեջ, հատկապես չափածոյում որոշիչները ավելի շատ շրջուն, քան սովորական շարադասությամբ են հանդես գալիս:

Ետադաս որոշիչները բանաստեղծությանը կենդանի, լիրիկան շունչ են տալիս, խոսքը դարձնում ավելի քնարական. շրջունությունը նաև բանաստեղծությունը հանգավորելու և ռիթմը պահելու, ինչպես նաև միատար հնչերանգությունը փոխելու, խոսքին վայելչություն ու բարձր ոճ հաղորդելու լավագույն միջոց է:[10]

Ետադաս որոշիչները, եթե մեկ բառով են արտահայտված, սովորաբար չեն տրոհվում որոշյալներից: Իսկ եթե որոշիչները մեկից ավելի են, տրոհվում են բութով: Տրոհվում են նաև համասեռ որոշիչները:

Իսկ եթե որոշիչները անհամասեռ են, կամ արտահայտված են որակական ու հարաբերական ածականներով, այդ դեպքում նախ դրվում է հարաբերական, ապա՝ որակականը:

*Օրինակ՝ Ապառաժներ **<u>համր ու հանդարտ,</u>***

*Հողակիցներ իմ **<u>թանկագին</u>***

*Զորավարներ **<u>անսաղավարտ,</u>***

*Թագավորներ **<u>անթագակիր…</u>***

*Զմրուխտ անտառներ, լեռներ **<u>երկնաբարձ</u>***

*Կարծես թե ես եմ մանուկն այդ **<u>գանգուր</u>***

*Կարծես թե ես եմ մանուկն այդ **<u>կայտառ…</u>***

Հատկացուցիչ

Հատկացուցիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս պատկանելություն, ստացականություն, վերաբերություն, հատկացում այսինքն, թե ում կամ ինչին է պատկանում հատկացյալով արտահայտված առարկան:

[10] Արտ Պապոյան. Խ. Բաղիկյան Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե, 2003, էջ 125

Ճիշտ է հատկացուցիչը արտահայտում է պատկանելություն, ստացականություն, բայց այդ իմաստը լրացում լրացյալի ներքին հարաբերություններով պայմանավորված կարող է տարբեր իմաստային նրբություններ արտահայտել:

Հատկացուցիչ հատկացյալ կապակցության իմաստային նրբերանգները պայմանավորված են սեռական հոլովի իմաստային բազմազանություններով:

Սակայն առարկայական այդ հարաբերությունների մեջ ամենաէականն ու բնութագրիչը ստացականության, պատկանելության հարաբերությունն է, որն իրեն փաստորեն զգացնել է տալիս հատկացուցչի համարյա բոլոր դրսևորումներում:[11]

Պատկանելությունը, ստացականությունը տարբեր կապակցություններում իմաստային տարբեր նրբերանգներ է ձեռք բերում:

ա/Առարկան, որից առաջ է գալիս, ծագում է մի այլ առարկա կամ սերվելով, կամ իբրև արդյունք մի գործողության/ ծագման սեռական տրական/[12]

<u>Ծաղկի</u>** հեռ է գալիս **<u>արեգակի շողից</u>

*Ստվերից ու հովից **<u>ծաղկի հոտ</u>** է գալիս…*

բ/ առարկան, անձը կամ իր, որ ունի մի բան, կամ որին մի բան է պատկանում /ստացական սեռական/

Իմ պապը տնկել է

*Մեր **<u>գյուղի</u>** շիվերը*

Իմ պապը պայտել է

*Մեր **<u>գյուղի</u>** ձիերը*

*Իմ պապը մեր **<u>գյուղի</u>***

Պատերը շատ է…

*Ժայռերին ձև ես տվել , քարերին **<u>արծվի</u>** թևեր…*

գ/ Առարկան, որից առաձնացվում, վերցվում է մի մասը/ մասնական սեռական-տրական/

*Սաղարթի միջից **<u>արևի</u>** մի շող …*

*Չոր **<u>հացի</u>** մի բաժին էր պետք …*

---

[11] Մ.Աբեղյան Հայոց լեզվի տեսություն էջ 420-426, 2-րդ մաս Շարահյուսություն Ե. 1976

[12] Մ.Աբեղյան Հայոց լեզվի տեսություն էջ 420-426, 2-րդ մաս Շարահյուսություն Ե. 1976

դ/ Առարկան, որի համար հատկացված կամ նախատեսված է մի բան/ հատկացման սեռական- տրական/

*Մի **ճաշի** գդալ ճաշակի բալզամ*

Մի բաժին բարի կամեցողություն…

***Գինու** բաժակը բռնում, պահում է ճամփաս…*

ե/ Առարկա, որից բաղկանում, կազմվում է մի այլ առարկա/ նյութի սեռական-տրական/

***Վարսակի** արտեր, արտեր գարու…*

***Ցորենի** կանաչ արտի մեջ…*

Հատկացման իմաստ արտահայտող սեռական տրականները ըմբռնվում են նաև հատկանշային նշանակությամբ և կարող են դիտվել նաև որոշիչներ:

զ/Այն տեղն ու ժամանակը, որի մեջ կամ սահմաներում կա ի այլ առարկա / տեղի և ժամանակի սեռական-տրական/

***Սարերի** գլխին ձյուն տեսա…*

*Այս **ձմեռվա** պաղ համբյուրով…*

է/ Առարկան, որը հանդես է գալիս որպես բայանուններով արտահայտված գործողության կատարող / ենթակայական սեռական-տրական/

Ես կնայեմ նրան… Ինքս կորոտամ,

*Չեմ սպասի մինչև **ամպի** որոտալը.*

Քանի անգամ մահը եկավ, որ ինձ տանի,

*Ասի-մնա, մինչև **որդուս** գալը տեսնեմ:*

ը/Առարկան, որը հանդես է գալիս որպես բայանուններով արտահայտված գործողության կրող/ առարկայական սեռական տրական/

*Գովքն էին անում քո **լուսաբացի**…*

Բայց ինչու օրենք է

***Հավքերին** ուտելը:*

Հատկացուցիչը կարող է արտահայտել գնի և արժեքի, վերաբերության, համեմատության ու գերադրության և այլ հարաբերություններ, որոնք պայմանավորված են տվյալ բառակապակցության միջոցով հարաբերության մեջ մտնող գոյականների բառային իմաստներով:

Հատկացուցիչ և հարկացյալ կապակցությունը

Հատկացուցիչի և հարկացյալի քերականական կապակցության եղանակը խնդրառությունն է, քանի որ հատկացուցիչը որպես առարկայական լրացում արտահայտվում է սեռական-տրական հոլովով, որը կախված է գերադաս բառից՝ գոյականաբար գործածված բառից:Հատկացուցիչը հատկացյալի վրա է դրվում՝ չհամաձայնելով նրա հետ ոչ՛ հոլովով և ոչ էլ թվով: Սակայն առանձին դեպքերում հոգնակի և բազմակի հատկացուցիչների հետ հոգնակի հատկացյալներն են դրվում, երբ հատկացուցիչը կարող է վերաբերել ոչ թե մեկ, այլ մի քանի առարկաների միայն:

Սակայն հաճախ հատկացուցիչների հատկացյալը եզակի թվով է դրվում՝ հատկապես երբ վերացական անուն է կամ առանձնական նշանակությամբ է մտածվում:

Հատկացուցիչ և հատկացյալի շարադասությունը

Ժամանակակից հայերենում հատկացուցիչը սովորաբար դրվում է հատկացյալից առաջ:

Չափածոյում, գեղարվեստական արձակում հատկացուցիչները կիրառվում են նաև շրջուն շարադասությամբ, որը դարձյալ գեղարվեստական խոսքին հաղորդում է հուզականություն և վայելչագեղություն:[13]

Ետադաս հատկացուցիչը, ինչպես ետադաս որոշիչը, բազմակի լինելու դեպքում տրոհվում է, իսկ նախադաս գործածության դեպքում չի տրոհվում:

Տրոհումը կատարվում է միայն այն դեպքում, երբ հատկացուցիչ և հատկացյալի միջև կան այլ բառեր կամ բառակապակցություններ:Նման դեպքում հատկացուցչի վրա բութ է դրվում:

Օրինակ՝

Անուշ երգերը իմ <u>մանկության…</u>

Եվ պահպանում է այս արահետը

Ոտնահետքերը իմ <u>մանկության</u>

Կանաչ պատկերը իմ <u>մանկության …</u>

Սրբեց քրտինքն իր <u>ճակատի…</u>

---

[13] Արտ Պապոյան , Խ. Բաղիկյան, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն Ե. 2003, էջ 130

Բացահայտիչ

Բացահայտիչ է կոչվում նախադասության այն անդամը,որը դրվելով գոյականների ու գոյականական դերանունների վրա վերջից և որպես կանոն , հոլովով, թվով և դեմքով համաձայնելով նրանց՝ որոշում, բացահայտում, ճշգրտում և մասնավորեցնում է լրացյալների նշանակությունը:[14]

Բացահայտիչ են դառնում հիմնականում գոյականները և գոյականաբար գործածված բառերը:

Նախադասության մյուս անդամների հետ համեմատած՝բացահայտիչն ունի իր կայուն դիրքը. այն միշտ դրվում է ետադաս, այսինքն՝դրվում է բացահայտյալից հետո: Եթե դրանց տեղերը փոխենք, բացահայտիչը կդառնա բացահայտյալ, իսկ վերջինս էլ՝ բացահայտիչ: Մյուս կողմից բացահայտիչն ունի արտասանական այն առանձնահատկությունը, որ միշտ բացահայտյալից անջատվում է դադարով, որը և բացահայտչի ձևավորման միջոցներից մեկն է: Եվ այդ դադարը գրավոր խոսքում սովորաբար նշվում է բութով:

Պետք է նկատի ունենալ որ երբ բացահայտիչը ունենում է լրացումներ, հաճախ բացահայտումը կատարվում է ոչ թե գերադաս բառով, այլ գերադաս բառով և լրացումներով, ուստի բացահայտիչ պետք է համարել ոչ թե գերադաս բառը, այլ ամբողջ կապակցությունը:

Բացահայտիչը լինում է երեք տեսակ

1. Բուն կամ սովորական բացահայտիչ
2. Մասնական բացահայտիչ
3. Պարագայական բացահայտիչ

Բուն կամ սովորական բացահայտիչ

Սա բացահայտի այն տեսակն է, որը միշտ դրվում է բացահայտյալից հետո, այսինքն՝ ետադաս դիրք ունի, սովորաբար համաձայնում է դեմքով, թվով, հոդառությամբ/ սակայն ոչ միշտ/ հատուկ առոգանությամբ արտաբերվում, տրոհվում նրանից:

[14] Մ. Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու Ե. 1987 էջ 209

Բացահայտյալի և բացահայտչի կապակցությունները արտահայտում են իմաստային զանազան հարաբերություններ:

1. *Բացահայտյալն արտահայտում է ընդհանուր իմաստ, իսկ բացահայտիչը կոնկրետացնում, մասնավորում է նրա ընդհանուր նշանակությունը:*

   Օրինակ՝ Կա անպաճույճ մի խրճիթ

   Գեղջկական մի տուն:

2. *Հատուկ անունը դառնում է բացահայտիչ հասարակ անվան, մասնավորեցնում է հասարակ անունը:*
3. *Հասարակ անունը բացահայտում է հատուկ անունը և դառնում է բացահայտիչ հատուկ անվան :*
4. *Բացահայտիչը կարող է մասնավորեցնել, կոնկրետացնել դերանվան ընդհանուր նշանակությունը:*

   Օրինակներ՝

   Ես՝ տանջված այս հողի մատաղն եմ,

   Ձեզ լինի մահարձան խաչքարը…

   Շատ ենք խորհուրդ արել մենք՝ իմ սիրտն ու ես միասին,

   Որ նստենք ու առանձին մի երգ գրենք ձեր մասին:

   Գաղթականի շորեր հագած

   Ինքը՝ Գուրգեն Մահարին է:

   Ծիածանի շորեր հագած

   Ինքը՝ Գուրգեն Մահարին է:

Երբեմն բացահայտիչը բացահայտյալի հետ կապվում է այսինքն կամ այն է մեկնական բառերով, որոնք բացահայտչին օժտում են տրամաբանական ուժեղ շեշտով ու ընդգծվածությամբ:

Մասնական բացահայտիչ

Հաճախ բացահայտիչը բացահայտյալի հետ կապվում է որպես, իբրև / սակավ դեպքում ինչպես/ բառերով: Այդպիսի բացահայտիչը ընդունված է կոչել մասնական բացահայտիչ: Բացահայտչի այս տեսակը և՛ ձևային, և՛ իմաստային հատկանիշներով տարբերվում է սովորական բացահայտչից: Այդ տարբերությունն այն է, որ այս դեպքում

որոշ սահմանափակում է մտցվում բացահայտյալի անվան մեջ, քանի որ այն ոչ ամբողջովին է բացահայտվում, այլ մասնակիորեն:

Մասնական բացահայտչի շարադասությունը ազատ է, այն կարող է դրել ինչպես բացահայտյալից առաջ, այնպես էլ հետո: Նույնիսկ նախադասության մեջ միջադաս դիրք գրավել: Մասնական բացահայտիչը սովորաբար անորոշ առումով է գործածվում և դեմքով չի համաձայնում բացահայտյալին, կետադրության առումով էլ տարբերություն կա:

Օրինակներ՝

Արար աշխարհ կթնդա յոթ օր , յոթ գիշեր,

*Արևն **<u>ինչպես</u>** ոսկի հավաք՝ իջած տանիքին…*

Ինչ իմանայի ես այն մութ օրը,

*Որ մի աստղ **<u>իբրև</u>** փրկության հույս*

Հեռու հյուսիսից գալով այս ձորը,

Կբերեր հազար արևի լույս:

Ներքևում կիրճ են դառնում մի խոր,

***<u>Ինչպես</u>** ձորերն իմ Զանգեզուրում:*

Բացահայտչի այս տեսակը հաճախ շփոթում են ձևի պարագայի հետ:

Օրինակներ՝

Որոտանի եզերքին շիրիմն իմ պապի,

Որպես անմահ փառքի սյուն պահում է ճամփաս:

Ա՜խ, թե կարկաչեն երգերս անվիշտ,

Իբրև լեռնային աղբյուրներ անմեռ…

Երազների ու հույսերի վրա,

Իբրև օրհնություն քո ձյունը իջներ …

Ձյուն իջնում է պայծառ, իբրև բախտի հավատ…

Մասնավորող պարագայական բացահայտիչ

Հաճախ տեղի և ժամանակի պարագաների մոտ դրվում են դրանց տեղն ու ժամանակը կոնկրետացնող բառեր, որոնք ճշգրտում, մասնավորում են տեղի և ժամանակի ընդհանուր իմաստները:

Այդպիսի բացահայտիչը կոչվում է պարագայական բացահայտիչ:

Եթե պարագայական բացահայտիչը ընկած է նախադասության վերջում, տրոհվում է բութով, իսկ եթե ընկած է նախադասության մեջ , ապա տրոհվում է մի կողմից բութով, իսկ մյուս կողմից՝ ստորակետով:

Օրինակներ՝

Այստեղ, իմ հեռու Գյազբելի լանջին…

Քարափների գլխին՝ Որոտնաբերդ ,

Քարափների ծունկին՝ ծիծեռնավանք:

Ուղտասարի ոտքերի տակ՝

Հսկայական քարե մի գուռ,

Քարե մի բերդ հսկայական,

Քարե պարիսպ ու քարե դուռ…

Հին եկեղեցու պարիսպների տակ,

Գերանի վրա հասակի կարգով…

Բլրի վրա, քարափին

Ամպի ստվերն է դողում…

Եզրակացություն

Գոյականական անդամի լրացումները իրենց կարևոր տեղն ու նշանակությունը ունեն նախադասության երկրորդական անդամների շարքում:

Այս թեման ուսումնասիրելիս հանգեցինք այն եզրակացությանը, որ թեմայի ուսուցման և յուրացման համար հարկավոր է լինել հետևողական և իրականացնել համակարգված ուսուցում որոշչի, հատկացուցչի և բացահայտչի շարադասության և կետադրության վերաբերյալ:

Այս թեմայի յուրացումը կարևոր է նաև նրանով, որ կնպաստի սովորողների բառապաշարի հաստացմանը, կխուսափեն տարածված սխալներից, կզարգանա բանավոր խոսքը, ինչպես նաև կխթանի պատկերավոր մտածողությանը:

Արդյունավետ ուսուցման համար հարկավոր է, որ սովորողները նյութը ոչ թե բառացի վերարտադրեն կամ կրկնօրինակեն, այլ յուրացնեն թեման՝ կատարելագործելով հիշողությունը մտածելով, հաղորդակցվելով:

Անհրաժեշտ է նաև սովորողների մոտ զարգացնել տրամաբանական մտածողությունը, ստեղծագործական կարողությունը, որպեսզի սովորողները ձեռք բերեն տրամաբանված խոսք կառուցելու հմտություն:

Օգտագործված գրականություն

Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզու» Երևան 1987

Հ. Սահյան Երկեր, երկու հատորով: Բանաստեղծություններ, հատոր առաջին Երևան 1984

Հ. Սահակյան Երկեր, երկու հատորով Բանաստեղծություններ հատոր երկրորդ

Հատոր առաջին- «Նաիրյան դալար բարդի»

«Որոտանի եզերքին»

«Մայրամուտից առաջ»

Հատոր երկրորդ «Քարափների երգը»

«Սեզամ բացվիր»

«Իրիկնահաց»

«Կանաչ-կարմիր աշուն»

Մ. Աբեղյան «Հայոց լեզվի տեսություն» Երևան 1965

Արտ. Պապոյան, Խ. Բաղիկյան «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» Երևան 2003